ՖԱԹԵՄԻ ՍԵՅԵԴԵՀՆԱՍԻՄ
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

ԾԵՍԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՈՆԱՓՈԽ ԵԶԴԻՆԵՐԻ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ) ՇՐՋԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *կրոնափոխ եզդիներ, Եհովայի վկաներ, կրոնական գիտակցություն, ծեսերի և ավանդույթների վերագնահատում, մկրտում, ծնունդ, հարսանիք, հուղարկավորություն:*

Հոդվածում փորձ է արվում վերլուծել կրոնական գիտակցության վերափոխումը կրոնափոխ եզդիների (Եհովայի վկաներ) շրջանում, ինչպես նաև ավանդական ծեսերի փոփոխությունները, որոնք նոր կրոն ընդունելու արդյունք են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած կրոնական գիտակցության զգալի փոփոխություններին, եզդիների մի մասը միանգամից չի հեռանում ավանդական ծեսերի կատարումից, ինչի արդյունքում այս փուլում ձևավորվում է որոշակի՝ սինկրետիկ տարրերով հագեցած մշակույթ: Հոդվածի հիմքում ընկած է Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի Եհովայի վկա եզդիներից հեղինակի հարցազրույցների վերլուծությունը:

Եզդիներն իրենց բազմադարյան գոյության ընթացքում ձևավորել են ինքնատիպ և հարուստ ծեսեր և ավանդույթներ, որոնք ստեղծվել են Շարֆադին[1] օրինաչափություններով: Նրանց կատարման կարգը սերնդեսերունդ փոխանցվել է հիմնականում բանավոր ձևով: Միայն շատ քիչ տեղեկություններ են փոխանցվել գրավոր: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանում կյանքը և ապրելու պայմանները վատթարացան, ինչը բնակչության, այդ թվում եզդիների զանգվածային արտագաղթի պատճառ հանդիսացավ: Շատերը թողեցին իրենց հարազատ բնակավայրերը և հաստատվեցին ուրիշ երկրներում՝ հիմնականում Եվրոպայում և Ռուսաստանում: Կտրված լինելով իրենց ավանդական արմատներից և չունենալով ավանդույթների և ծեսերի կատարման գրավոր ուղեցույցեր՝ եզդիները սկսեցին ծեսերը կատարել ըստ սեփական պատկերացումների, ինչի հետևանքով դրանք որոշակիորեն ձևափոխվեցին: Միևնույն ծեսի կատարման տարբերակներ ի հայտ եկան տարբեր երկրներում ապրող եզդիների մոտ: Սրա պատճառներից էր նաև այն, որ նոր բնակա-

---

[1] Եզդիներն իրենց կրոնն անվանում են Շարֆադին:

վայրերում միշտ չէ, որ ներկա էին շեյխեր և փիրեր, որոնց ուղիղ պարտականությունն էր ծեսերի անցկացումը և վերահսկումը, որ դրանք համապատասխանեն դարերի ընթացքում ձևավորված կարգին և օրենքներին:

Եհովայի վկաների կրոնն ընդունելով[2], շատ եզդիներ հեռացան իրենց ավանդական ծեսերից և ավանդույթներից, իսկ այն քչերը, որոնք պահպանեցին, դա արեցին մասնակիորեն, ինչը հետևանք էր նրանց ընտանիքի անդամների ավանդական կյանքով ու բարքերով ապրող մարդկանց գոյությամբ: Օրինակ, եթե եզդի կինն է Եհովայի վկա դարձել, իսկ ամուսինն ու նրա ծնողները չեն փոխել իրենց կրոնը, ապա կինը չի կարող լիովին հրաժարվել եզդիական ավանդույթներից և ծեսերից: Նույն պատկերն է դիտվում նաև երիտասարդ աղջիկների և տղաների դեպքում: Եհովայի վկա դառնալով, նրանք ամբողջությամբ չեն կարող ազատվել հին ծեսերից, քանի որ ծնողներն ապրում են իրենց ավանդական օրենքներով: Մոտ երկու տարի եզդի Եհովայի վկաների ուսումնասիրման և բազմաթիվ կրոնափոխ եզդիների հետ հարցազրույցների համադրման արդյունքում եկել եմ այն եզրահանգմանը, որ անցյալ տարեվերջի տվյալներով Հայաստանում ապրում է մոտ հարյուր հիսուն եզդի Եհովայի վկա: Հաշվի առնելով հավատափոխության դինամիկան՝ կարծում եմ, որ այս տարեվերջին նրանց թիվը զգալիորեն կավելանա:

Եհովայի վկաները, որոնք ղեկավարվում են բացառապես Աստվածաշնչի պատվիրաններով[3], չեն նշում Նոր տարին, իրենց ծննդյան օրը կամ այլ տոներ, քանի որ Աստվածաշնչում գրված չէ դրանց անհրաժեշտության մասին: Կատարվում են միայն Աստվածաշնչում նշված տոներն ու ծեսերը: Ստորև ներկայացնում եմ այն ծեսերն ու տոները, որոնք կատարվում են կրոնափոխ եզդիների կողմից:

Հիսուս Քրիստոսի մահվան երեկո

Ըստ Եհովայի վկաների օրենքների՝ եզդի Եհովայի վկաները կարող են նշել միայն Մահվան տոնը՝ Հիսուս Քրիստոսի մահվան երեկոյի հիշատակին՝ քանի որ այդ մասին նշված է Աստվածաշնչում: Եհովայի վկաները ողջ աշխարհում ամեն տարվա ապրիլի 19-ին կամ 20-ին (կախված նահանջ տարուց) արևի մայր մտնելու ժամանակ՝ ժ. 19:00-ին սկսում են Մահվան տոնի արարողությունը: Եհովայի վկաները, այդ թվում և Եհովայի վկա դարձած եզդիները,

---

[2] **С. С. Фатеми,** «Езиды Армении в секте «Свидетелей Иеговы» (первичный анализ мотивации)». Регион и Мир, научно-аналитический журнал, т. IX, No 4, 2018, с. 111-115.

[3] Տե՛ս **Marly Cole**, *Jehovah's Witnesses – the New World Society,* New York: Vantage Press, 1955, p 229.

կոկիկ հագնված հավաքվում են «Թագավորության սրահում»[4]։ Արարողությունը տևում է մոտ երկու ժամ, սկզբում ելույթ են ունենում երեցները։ Նրանք պատմում են, թե Հիսուսն ինչու եկավ աշխարհ, ով մատնեց նրան և ինչպես նրան խաչեցին։ Ամեն բան մանրակրկիտ բացատրվում է։ Երեցների[5] ելույթից հետո տղաներից մեկը մի բաժակ գինի և մի քիչ չոր հաց է բերում։ Սկզբում հացն են բերում՝ ասելով, որ դա Քրիստոսի մարմինն է։ Ներկաներից յուրաքանչյուրն այն վերցնում ու կամացուկ շշնջում է. «Հիսո՛ւս, շնորհակալ եմ, որ քո կյանքը տվեցիր մեր մեղքերի թողության համար, օգնիր ինձ, որ արժանի լինեմ քո աշխարհին», որից հետո հացն առանց համտեսելու փոխանցվում է մյուսներին։ Այնուհետև մատուցում են բաժակով գինին, որը Հիսուսի արյունն է խորհրդանշում։ Այս դեպքում ևս, յուրաքանչյուրն իր մտքում ասում է այն, ինչ ցանկանում է և գինով բաժակն առանց խմելու փոխանցում է հաջորդին։ Եզդի Եհովայի վկա քարոզիչը նաև նշում է, որ Քրիստոսը մահացավ, բայց նրա հոգին չի համբարձվել։ Հոգու համբարձում գոյություն չունի, այդ իսկ պատճառով մարդիկ չպետք է մեղանչեն, քանի որ Հիսուսն արդեն մեկ անգամ զոհել է իր կյանքը նրանց մեղքերի թողության համար։ Սրան հաջորդում են Աստվածաշնչի խոսքերով՝ Քրիստոսի մահվան թեմայով երգեր, որից հետո երեցներից մեկը սկսում է աղոթել՝ մնացածը լսում են։ Աղոթքում ասվում է, որ մարդիկ արժանի չէին, որ Աստված իր միակ որդուն զոհաբերեր։ Շնորհակալական խոսքն են հղում Աստծուն, և արարողությունն ավարտվում է։ Երեք օր պահելուց հետո միայն օծյալները[6] կարող են ուտել հացն ու խմել գինին։ Հայտնության ԺԴ գլխում ասված է, որ նրանք Հիսուսի հետ պետք է թագավորեն երկնքում։

Քրիստոսի մահվան հիշատակի տոնը նշվում է Եհովայի վկա դարձած բոլոր ազգերի ներկայացուցիչների, ինչպես նաև Եհովայի վկա դարձած եզդիների մոտ ամբողջ աշխարհում։ Բոլոր ազգերի մոտ էլ տոնի անցկացումը նույնն է և ենթարկվում է բացառապես Եհովայի վկաների կրոնի օրենքներին։

---

[4] Թագավորության սրահը շինություն է, որտեղ Եհովայի վկաները հավաքվում են Աստծուն երկրպագելու համար։ Յուրաքանչյուր Թագավորության սրահ ունի դահլիճ, որտեղ Աստվածաշնչի կրթական ծրագիր և դասախոսություններ են անցկացվում։ Տե՛ս https://wol.jw.org/hy/wol/d/r44/lp-rea/2010331#h=3 (**2019** Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania):

[5] Երեցները հոգևոր հասուն տղամարդիկ են, որոնք առաջնորդություն են վերցնում ժողովում և հովվում են։ Տե՛ս https://www. jw. org/hy:

[6] Ղեկավար մարմինը բաղկացած է Տասներկու «օծյալ» ծերունիներից՝ երկնային դասից։ Այս երկնային դասին պատկանողները կամ օծյալները համարվում են 144. 000 օծյալների դասի անդամներ, որոնք մահվանից հետո անմիջապես պիտի համբարձվեն երկինք՝ երկնային դասին միանալու համար։ Տե՛ս https://kronadaran. am/dictionary/ehovayi-vkaner (2019):

Մկրտելու արարողությունը

Ավանդական եզդիների մոտ երեխայի ծնունդն ուղեկցվում է որոշ արարողություններով և ծեսերով՝ ձեռնադրում, օծում ու թլպատում[7]: Եզդի Եհովայի վկաների մոտ արարողակարգը լրիվ այլ է: Այն իր մեջ ներառում է Եհովայի վկաների կրոնի օրենքների պահանջներն ամբողջությամբ: Նրանք երեխայի ծնվելուց հետո ազատված են որևէ ծեսի կատարումից, համարելով, որ դա «սատանայի գործն է»: Ծնողները երեխային վաղ հասակից տանում են իրենց հետ «Թագավորության սրահ», և նա ներկա է գտնվում ժողովներին: Երբ նա դառնում է գիտակից և կարողանում է ինքնուրույն որոշում կայացնել, ապա կամ ընտրում է Եհովայի վկաների կրոնը, կամ նախապատվություն է տալիս եզդիական ավանդական կրոնին: Ի դեպ, եզդի երեխան ծնվելուց անմիջապես հետո համարվում է եզդի և, ինքնաբերաբար՝ եզդիական ավանդական կրոնի կրող: Եթե եզդի երեխան ինքնուրույն որոշում է կայացնում ընդունել Եհովայի վկաների կրոնը, նրան «Թագավորության սրահում» հանդիսավոր պայմաններում մկրտում են, և նա այդ պահից համարվում է Եհովայի վկա: Պետք է նշել, որ երեխաների ինքնուրույն որոշում կայացման արդյունքում՝ նրանց ճնշող մեծամասնությունը դառնում է Եհովայի վկա:

Ըստ Եհովայի վկաների ուսմունքի՝ «Եհովայի վկաները մկրտվում են միայն որոշակի մակարդակի հասնելուց և ուսմունքին բավարար տիրապետելուց հետո»: Մկրտվելու արարողությունը Եհովայի վկաների մոտ ունի իր առանձնահատկությունները: Ստորև ներկայացնում եմ 2018 թ. Բալահովիտում կայացած եզդի Եհովայի վկաների «Համաշխարհային համաժողովում» մկրտման արարողության նկարագրությունը, որին ներկա եմ եղել:

Համաժողովի ընթացքում մկրտվեցին մի եզդի տղա և աղջիկ (մոտ քսան տարեկան), որոնք ըստ քարոզիչների, հասել էին այնպիսի աստիճանի, որ կարող էին Եհովայի վկա դառնալ:

Ամբիոնին մոտեցավ Երեցը՝ աղջիկը և տղան կանգնեցին նրա դիմաց և Երեցը նրանց հարցրեց.

1) «Զղջացե՞լ եք ձեր արած մեղքերի համար, որոնց համար Հիսուսը իր կյանքը զոհաբերեց»: Նրանք պատասխանեցին՝ այո:

2) «Հասկանո՞ւմ եք, որ մկրտվելուց հետո ձեզ համարելու են Եհովայի վկա և դուք հանդիսանալու եք կազմակերպության մի մասը»: Նրանք պատասխանեցին՝ այո:

Եզդի Եհովայի վկաներից մեկն ինձ բացատրեց, որ այսօրվանից նրանք

---

7 Տես՝ **Թ. Ամրյան**, *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան 2016, էջ 106-111:

պարտավոր են ամբողջովին նվիրվել հոգևոր կյանքին, ամեն օր ուսումնասիրել Աստվածաշունչը և քարոզել: Այնուհետև նրանք մոտեցան դահլիճի անկյունում գտնվող մի ոչ մեծ լողավազանի, որի մեջ կանգնած մարդը պետք է օգներ մկրտվելուն:

Մկրտվողի հագուստի ընտրությունն ազատ է: Մկրտվող տղան մոտեցավ լողավազանին, և մարդն օգնեց նրան, որ մկրտվողը քիթը բռնած ամբողջ մարմնով պառկի ջրի մեջ: Ջրից դուրս գալուց հետո դահլիճում հավաքված բազմությունը ծափահարեց, և նա դարձավ եզդի Եհովայի վկա: Նույն արարողությունը կրկնվեց նաև աղջկա պարագայում:

Հարսանիք

Ավանդական եզդիների հարսանեկան արարողակարգը ձևավորվել է դարերի ընթացքում և իր մեջ ներառում է շատ ծեսեր[8], որոնք կատարվում են առ այսօր:

Ավանդապաշտ եզդիները իրենց աղջիկներին ամուսնացնում են հիմնականում 14-15 տարեկանում: Տղայի և աղջկա ծնողների միջև կայացված որոշումը վերջնական է: Ոչ ոք չի հարցնում աղջկա կարծիքը: Մի մեծահասակ եզդի կին, մեկնաբանելով այս հարցը, թե ինչու են եզդիները իրենց աղջիկներին ամուսնացնում այդ վաղ հասակում, բացատրեց. «Այդ տարիքում աղջիկներին ավելի հեշտ է սովորեցնել նոր ընտանիքին, ամուսնուն ենթարկել: Ավելի մեծ տարիքում աղջիկներին ավելի դժվար կլինի վարժեցնել նոր կյանքի պայմաններին և հնազանդ ու հարմարվող դարձնել»[9]: Որոշ ծնողներ իրենց աղջիկներին ամուսնացնում են հասուն դառնալուց հետո, սակայն մանկահասակ աղջիկների ամուսնությունները դոմինանտ բնույթ են կրում առ այսօր:

Եհովայի վկաների կրոնն ընդունած եզդիների ամուսնության հետ կապված բոլոր արարողությունները կարգավորվում են միայն Եհովայի վկաների կրոնի պահանջներով: Նրանք կարող են ամուսնանալ միայն Եհովայի վկաների հետ՝ անկախ ազգային պատկանելիությունից: Աղջիկները կարող են ամուսնանալ 18 տարեկանից սկսած: Եթե զույգը իրար համակրում է, բավական տևական շրջան շփվում են, որպեսզի իրար ավելի մոտիկից ճանաչեն, իմանան դիմացինի նախասիրությունները, ծանոթանան նրա ընտանիքին և այլն: Հատկանշական է, որ ծանոթության առաջին օրից մինչև ամուսնանալը, զույգն իրավունք ունի հանդիպել, զբոսնել, կամ պարզապես տանը միասին նստել միայն երրորդ անձի ներկայությամբ: Ծանոթության և շփման հենց առաջին օրերից տղան «Թագավորության սրահում» մոտենում է երեցին և պատմում,

---

8 Տե՛ս **Isya Joseph**, *Devil Worship*, Boston: The Gorham press, 1919, pp. 186-191.

9 Տե՛ս https://youtu. be/775FzpRkaU8 (Jun 19, 2019):

որ ինքը համակրում է տվյալ աղջկան և իրենք լուրջ մտադրություն ունեն ամուսնանալու և համատեղ ապրելու: Այսպիսով, հենց սկզբից, նրանց շփումը գտնվում է երեցի և ժողովականների որոշակի հսկողության տակ: Մինչև նշանվելը զույգը շփվում է մոտ մեկ տարի: Նշանդրեքին տղան աղջկան մատանի է նվիրում, որը խորհրդանշում է, որ այդ պահից աղջիկը պատկանում է տղային և նրա ընտանիքին: Ամուսնության ժամանակ էլ աղջիկն է տղային մատանի նվիրում: Ավանդական եզդիների մոտ միայն տղան է մատանի նվիրում, բայց վերջին տարիներին աղջկա ընտանիքը ամուսնանալիս նույնպես սկսել է տղային մատանի նվիրել: Այսպիսով թե՛ ավանդական եզդիների և՛ թե Եհովայի վկա եզդիների մոտ մատանի նվիրելու մշակույթը դարձել է նույնը: Նշանվելուց երկու, երեք ամիս հետո զույգը դիմում է ամուսնության գրանցման գրասենյակ՝ ամուսնությունը ձևակերպելու համար: Ամուսնությունը օրինականացնելուց հետո մի քանի օր անց «Թագավորության սրահում» տեղի է ունենում պսակադրության արարողություն: Երեցը ժողովականներին ցույց է տալիս նորապսակների ամուսնական վկայականը, հատվածներ է կարդում Աստվածաշնչից: Նորապսակներն էլ իրենց հերթին շնորհակալություն են հայտնում Եհովա աստծուն իրենց պարգևած շնորհի համար, որից հետո բոլորը միասին աղոթում և Աստվածաշնչից հատվածներ են երգում: Արարողությունից հետո, եթե տղայի հնարավորությունները ներում են, նա մի փոքր խնջույք է կազմակերպում որևէ ռեստորանում կամ տանը: Խնջույքի ժամանակ ոգելից խմիչքներ չեն օգտագործում: «Թագավորության սրահում» կատարված արարողությունից հետո երիտասարդները համարվում են օրինական ամուսիններ և կարող են սկսել իրենց համատեղ կյանքը: Եհովայի վկա եզդիների ամուսնության ժամանակ չկա ո՛չ քավոր ու քավորկին, ո՛չ հարսնեղբայր, ո՛չ հարսնաքույր և այլն: Միայն մինչև «Թագավորության սրահ» գնալը նորապսակները նկարվում են որևէ տեսարժան վայրում կամ այգում: «Թագավորության սրահ» են գալիս ավտոշարասյունով, ձայնային ազդանշաններով արտահայտելով իրենց տոնական տրամադրությունը:

Թաղման արարողություն

Ավանդական եզդիներն հանգուցյալի թաղումը կատարում են ավանդական օրենքներով և ծեսերով: Թաղման արարողությունը ղեկավարում են շեյխերը և փիրերը[10]:

Եզդի Եհովայի վկաների մոտ թաղումը կատարվում է ըստ Եհովայի վկաների կրոնի օրենքների: Եզդի Եհովայի վկան նախապես կտակ է գրում՝ մահանալուց հետո իր հուղարկավորության կատարման կարգի մասին: Նա այդ

[10] **Isya Joseph,** *Devil Worship*, pp. 192-193.

կտակը թողնում է Երեցի մոտ։ Եթե նման կտակը բացակայում է, Եհովայի վկաները դիմում են հանգուցյալի հարազատներին՝ տեղեկանալու, թե արդյոք նրանք ուզում են, որ հանգուցյալին հուղարկավորեն իրենց օրենքով, թե՞ եզդիական ավանդական թաղման կարգով։ Եթե վկաները հարազատներից դրական պատասխան են ստանում, ապա նրանք իրենց վրա են վերցնում թաղման ողջ արարողությունը, իսկ եթե հարազատները նախընտրում են հանգուցյալի ավանդական կարգով թաղումը, նրանք պարզապես մասնակցում են հուղարկավորությանը։ Եհովայի վկաները թաղման ժամանակ հրաժարվում են թե՛ հոգեհանգստի արարողությունից, թե՛ էգնահողից, յոթից ու քառասունքից, թե՛ թաղմանը ուղեկցող երաժշտությունից ու հոգեհացից՝ նշելով, որ այդ ամենի մասին Աստվածաշնչում հիշատակում չկա, այդ պատճառով էլ չի կարող կատարվել։ Թաղման ժամանակ հանգուցյալին հողին հանձնելուց անմիջապես առաջ Երեցը հայացքը հառնում է դեպի երկինք և ասում. «Ով Եհովա աստված՝ կսպասենք նրա հարությանը»։ Թաղումից հետո հոգեհաց չի տրվում, բայց թաղման այն մասնակիցները, որոնք շատ հեռվից են եկել և երկար ճանապարհ ունեն գնալու, կարող են ինչ-որ տեղ միասին ճաշել։ Թաղումից 15-20 օր հետո կամավորության սկզբունքով, վկաներից նրանք, որոնք ավելի մտերիմ են եղել հանգուցյալի հետ, այցելում են շիրիմին, սգում ու ծաղիկներ դնում գերեզմանին։ Մյուս այցելությունը հանգուցյալի շիրիմին կարող է կատարվել մի քանի ամսից, կամ մեկ տարի անց՝ ըստ իրենց ցանկության։

Եզդի Եհովայի վկաները հեռանալով իրենց բազմադարյան ծեսերից ու ավանդույթներից, հեռանալով իրենց կրոնից՝ հավատափոխությունից հետո դառնում են բոլորովին նոր մարդ, որն ապրում ու աշխատում է, իր բոլոր գործողությունները, ապագայի մասին պատկերացումները և երազանքները հարմարեցնելով Եհովայի վկաների կրոնի օրենքներին՝ ամբողջովին դառնալով նրա պահանջների կրողն ու տարածողը։

Չնայած դրան, եզդի Եհովայի վկաները, առանց որևէ առիթի, տարին մի քանի անգամ հավաքվում են, խնջույք կազմակերպում, ուրախանում, երգում, պարում են ավանդական եզդիների ազգային տարազներով...

FATEMI SEYEDEHNASIM

CHANGES IN RITUALS AND TRADITIONS AMONG CONVERTED YEZIDIS (JEHOVAH'S WITNESSES)

Keywords: converted Yezidis, Jehovah's Witnesses, religious consciousness, reassessment of rituals and traditions, baptism, birth, wedding, funeral.

This article attempts to analyze the transformation of religious consciousness among converted Yezidis (Jehovah's Witnesses), as well as the changes in traditional rituals which are the result of changes in the religion. Studies show that despite significant changes in religious consciousness, some Yezidis do not immediately depart from traditional rituals. Consequently, at this stage a certain culture with syncretic elements is formed. The article is based on an analysis of the author's interviews with Yezidi Jehovah's Witnesses from Armenia, Georgia and Russia.

ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ

ИЗМЕНЕНИЯ ТРАДИЦИЙ И РИТУАЛОВ В НОВОЙ РЕЛИГИИ СРЕДИ НОВООБРАЩЁННЫХ ЕЗИДОВ (СВИДЕТЕЛЕЙ ИЕГОВЫ)

Ключевые слова: обращенные езиды, Свидетели Иеговы, религиозное сознание, переоценка ритуалов и традиций, крещение, рождение, свадьба, похороны.

В статье предпринята попытка проанализировать трансформацию религиозного сознания среди новообращенных езидов (Свидетелей Иеговы), а также изменения религиозных традиций, которые являются следствием изменения религии. Исследования показали, что, несмотря на ощутимые изменения в религиозном сознании, часть езидов сразу не отказывается от своих традиций, вследствие чего на этом этапе формируется определённая культура с элементами синкретизма. В основе статьи лежит анализ опросов, проведенных автором среди езидов Свидетелей Иеговы из Армении, Грузии и России.